Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 487 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԲԵՐՔԱԲԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Բերքաբերի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ մանկապարտեզի սաների առօրյան կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր, 1 փողոց 2/1: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	21,405,190 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	«Բերքաբերի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր, 1 փողոց 2/1, ՀՎՀՀ 07620873)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հուլիսի 23-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների նկարագրություն. 1. Միջնապատերի կառուցում՝ բուժկետի, սննդի պահեստի և սանհանգույցի կառուցման համար, 2. Նոր դռների և պատուհանների տեղադրում, 3. Լամինատե և կերամոգրանիտե հատակների պատրաստում, 4. Պատերի և առաստաղի սվաղ ու ներքին հարդարման աշխատանքներ, 5. Սանտեխնիկայի տեղադրում, 6. էլեկտրալուսավորության աշխատանքներ, 7. Մուտքերի վրա հովածածկերի տեղադրում, 8. Արտաքին մայթերի և աստիճանների վերանորոգում: Բյուջե՝ 21,405,190 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հուլիսի 23-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Բերքաբերի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի շինվերանորոգման աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 21,405,190 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման շրջանակներում Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղը համագործակցելու է Տավուշի մարզպետարանի և Իջևանի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության Ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ